ՀԱՅՐԵՆԱԿԱՆՔ

ԵՍ ԻՄ ՄԱՆԿԱՆՆ ԱՍԻ

Ես իմ մանկանն մագաղաթներ տըւի ցոյց,
- Գիտե՞ս, տղաս, - ասի նրան հայրաբար, -
Գրքերն այս հին, բացի գրքեր լինելուց,
Մի այլ, խորին խորհուրդ ունեն մեզ համար։
Նայիր այս հին, դարեր թերթած թերթերին,
Այս տողերին՝ մեր մայրենի բարբառի
Առուներին, վտակներին, գետերին։
Նրանք տանում են միշտ դէպի վիթխարի
Իմացութեան ովկիանոսը մարդկութեան՝
Տուրքը ազնիւ՝ իր օրերից մանկութեան
Մինչեւ այսօր միշտ աննուաճ եւ տոկուն։
Այդ մեծ ծովում կան աւելի մեծ գանձեր.
Մերը համեստ, բայց դա մե՛րն է հոգեւին,
Հպարտացիր հասկանալով գանձը մեր,
Որ պապերը ժառանգութիւն մեզ տըւին։

Ես իմ մանկանն աւերակներ տըւի ցոյց,
-Գիտե՞ս, տղաս, - ասի նրան հայրաբար, -
Խլեակներն այս բացի խլեակ լինելուց,
Մի այլ, խորին խորհուրդ ունին մեզ համար։
Նայիր աւեր ոստաններին մեր ցրուած,
Գլուխները ասես սրով թոցըրած՝
Աղօթքները թողած կիսատ ու թերի.
Նայիր կանգուն այս որմերին վշտասոյզ,
Կամարներին՝ կոտրած, առկախ թեւի պէս,
Որ կործանիչ աղէտներից տալով խոյս
Ասես, ձգտել եւ թռել են դէպի մեզ։
Կան աշխարհում, աւերակներ հոյափառ,
Անգերազանց, գնա՝ Հռոմ եւ Աթէնք ...
Բայց մեր պապերն ա՛յս են թողել մեզ համար,
Նրանց փառքին մերը դիզել աշխատենք։

Ես իմ մանկանն մեր դաշտերը տըւի ցոյց,
-Գիտե՞ս, տղաս, - ասի նրան հայրաբար, -
Այս դաշտերը, բացի դաշտեր լինելուց,
Մի այլ, խորին խորհուրդ ունին մեզ համար։
Նայիր այս մեր ոսկեծածան արտերին,
Այգիներին՝ հարսների պէս գեղեցիկ.
Ջրանցքներին մեր կապտերակ, նոր ու հին,

Արգիշտիի ժամանակը դեռ փորած։
Գեղեցիկ են մեր դաշտերը պտղաւոր ...
Կան աշխարհում ուրիշ դաշտեր շէն ու ճոխ,
Բայց սրա՛նք են մեզ օրօրան դարաւոր,
Աշխատանքի եւ վայելքի մեզ կանչող։
Այստե՛ղ է, որ առատօրէն հեղեցին
Մեր պապերը քրտինք, արցունք եւ արիւն,
Եւ այն, իբրեւ մեծ սրբութիւն թողեցին
Սերունդներին ժառանգութիւն մնայուն։

Ես իմ մանկանն քաղաքները տըւի ցոյց,
-Գիտե՞ս, տղաս, - ասի նրան հայրաբար, -
Քաղաքներն այս բացի քաղաք լինելուց,
Մի այլ, խորին խորհուրդ ունեն մեզ համար։
Նայի՛ր այս մեր քաղաքներին անհանգիստ,
Գոհիներին ճշմարտութեան պէս շիտակ,
Երկնակարկառ պալատներին վեհանիստ,
Ուր արուեստն է դրել անմեռ յիշատակ։
Կան աշխարհում շատ քաղաքներ հոյակերտ,
Ուր ոսկին է իշխում սրտին եւ հոգուն,
Ուր մետաղն է հրէշաւոր մարդակեր,
Ցուցադրրել իր հրաշքներն աղմկուն ...
Քաղաքներում մեր՝ գարունն է մարդկութեան,
Ստեղծագործ ոգու անվերջ եռ ու զեռ,
Կառուցման մէջ քաղաքների մեր տիտան
Մարմնանում է մեր հանճարը մարդասէր։

Ես իմ մանկանն մեր երկիրը տըւի ցոյց,
-Գիտե՞ս, տղաս, - ասի նրան հայրաբար, -
Այս երկիրը, բացի երկիր լինելուց,
Մի այլ, խորին խորհուրդ ունին մեզ համար։
Նայիր այս մեր հին երկրրին վերափոխ,
Ժողովրդին ոգենորոգ, վերածին,
Ստեղծագործման այս կորովին յարաճող,
Որ կեանքի է կոչում նոյնիսկ մեռածին։
Հողագնդի վրրայ կան այլ երկիրներ,
Ուր կան եւ այլ ժողովուրդներ եւ այլ կեանք.
Բայց այս մե՛րն է, օ՛, հայրենիքն է այս մեր,
Ուր ազատ են մարդու ոգին, աշխատանք։
Այս ե՛ւ մերն էր, ե՛ւ մերը չէր դարերով,
Բայց ասացինք մի օր՝ «ընդմիշտ այդ մերն է»։
Ծաղկեցնենք այն ոգով, սրտով եւ սիրով,
Արժէ նրա համար ապրել ու մեռնել։

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ